# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 96
*29 հունիս 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մարգարյան

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 2018 թվականի 80-86 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

11 06 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No ‑ 80

06-031-0035-0019 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Ա. Ղուկասյանի դիմումը, գույքային թերթը կազմված 10.06.1981թ., հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումը, «Գ. Վերիյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշմամբ, «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» 01.06.2010թ. N 186 Ն հրամանով, Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 04.06.2018թ. N 2740 վկայագրի՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0035-0019 ծածկագրերի տակ գտնվող 0.09738հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1960թ. կառուցված 28.14քմ մակերեսով բնակելի տան, 1960թ. կառուցված 16.68քմ մակերեսով բնակելի տան, 1960թ. կառուցված 7.49քմ մակերեսով բնակելի տան, 1985թ. կառուցված 6.21քմ մակերեսով բնակելի տան, 1960թ. կառուցված 49.16քմ մակերեսով բնակելի տան, 1960թ. կառուցված 18.62քմ մակերեսով բնակելի տան, 1960թ. կառուցված 28.72քմ մակերեսով բաց պատշգամբի, 1985թ. կառուցված 38.38քմ մակերեսով բաց պատշգամբի, 1960թ. կառուցված 15.68քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ Արտակ Ռազմիկի Ղուկասյանի (ծնվ. 10.05.1974թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.09738հա հատկացված հողամասն անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել Արտակ Ռազմիկի Ղուկասյանին:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝
գ. Գուգարք 2-րդ փողոց տուն 23
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

11 06 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No - 81

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0067-0010 ԾԱԾԿԱԳՐԻ, ՎԱՐԴԳԵՍ ԱՍԱՏՈՒՐԻ ՍԱՔԱՆՅԱՆԻ (ՀԱՆԳՈՒՑՅԱԼ) ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0067-0010 ծածկագրի, հանգուցյալ Վարդգես Ասատուրի Սաքանյանի ընտանիքին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝
գ. Գուգարք 11 փողոց տուն 10

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  N 82

20 հունիսի 2018

ՎԱՐԴԻԹԵՐ ՍՈՒՐԵՆԻ ՍՈՂՈՅԱՆԻՆ ԻՐ ԹՈՌՆԻԿԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 33 և 34 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 134,135 հոդվածները, հաշվի առնելով Գուգարք համայնքի խնամակալության հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը*

Գուգարքի 6-րդ փողոցի N 35 տան անչափահաս բնակիչ Ռուսլան Արթուրի Պետրոսյանի (ծնվ. 22.06.2009թ.) խնամակալ նշանակել նույն տանը բնակվող՝ նրա հորական տատին՝ Վարդիթեր Սուրենի Սողոյանին՝ (անձնագ. AN 0252969, տրվ՝ 15.08.2012, 033, ծնվ. 09.08.1959թ.):

ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ 07300689

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

21 06 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 83

06-031-0025-0005, 0047 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Ս. Կարապետյանի դիմումը, գույքային թերթը կազմված 26.02.1995թ., հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումը, «Է. Ալրեսյան» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0025-0005, 0047 ծածկագրերի տակ գտնվող 0.01015հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1987թ. կառուցված 68.89քմ մակերեսով նկուղի, 1987թ. կառուցված 69.83քմ մակերեսով բնակելի տան, 1987թ. կառուցված 8.97քմ մակերեսով բաց պատշգամբի, 1987թ. կառուցված 79.09քմ մակերեսով բնակելի տան, 1987թ. կառուցված 4.24քմ մակերեսով բաց պատշգամբի, 1987թ. կառուցված 0.65քմ մակերեսով աստիճանահարթակի նկատմամբ Սարգիս Ստեփանի Կարապետյանի (ծնվ. 1936թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.01015հա հատկացված հողամասն անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել Սարգիս Ստեփանի Կարապետյանին:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝

գ. Գուգարք 4-րդ փողոց 1-ին նրբանցք տուն 1/1

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:
7. Ուժը կորցրած ճանաչել համայնքապետի 20.04.2018թ. N 68 որոշումը:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

22. 06. 2018

# ՈՐՈՇՈՒՄ N 84

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0001-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԿԱՆԳՆԵԼՈՒ, ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ, ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱԳՐՔԵՐՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՍԽԱԼՆԵՐԸ ՈՒՂՂԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Հ. Սուքիասյանի դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387Ն որոշմամբ, <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով.*

***Համայնքապետը որոշեց.***

1. Վերականգնել կադաստրային քարտեզի 06-031-0001-0002 ծածկագրի 738քմ տնամերձ հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և հողամասը սեփականության իրավունքով վերահատկացնել Հովհաննես Սոսի Սուքիասյանին:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հողամասի սեփականաշնորհումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:
3. Անշարժ գույքի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն է՝ գ. Գուգարք Էներգետիկների 6-րդ փողոց, 51:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 85

27. 06. 2018

## ԱՆՈՒՇ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԻՐ ԹՈՌԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 33 և 34 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 134,135 հոդվածները, հաշվի առնելով Գուգարք համայնքի Խնամակալության, հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը ՝*

Գուգարքի 5-րդ փողոցի N 2 տանը անչափահաս բնակիչ Արամայիս Մնացականի Ղազարյանի ( ծնվ. 01.12.2015թ., թ., ծննդյ. վկայական ԱԲ N 527744, տրվ. 16.08.2016թ. ) խնամակալ նշանակել նույն տանը բնակվող նրա հորական տատին՝ Անուշ Արամայիսի Ղազարյանին (ծնվ. 29.07,1968թ., անձնագ. AR 0619676, տրվ. 12.03.2018թ.):

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գուգարք համայնք, հասցե գյ. Գուգարք, փող.6, շ.47,
Հեռախոս՝ 5-24-76
Էլ.Փոստ՝ gugarq.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2018 թվականի **N 86**

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԱՔՍՅԱ ԹՈՒՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արաքսյա Թունյանի ներկայացուցիչ Արմենուհի Մաշակարյանի 2018 թվականի հունիսի 29-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Գուգարք համայնքի փող.3, շենք 15 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Արաքսյա Թունյանի ներկայացուցիչ Արմենուհի Մաշակարյանի հայտը բավարարել և տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2018թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար՝ ։

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Ա.Աշուղյան